ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ,
ՄԱՐԶԻ ՔՊ ՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ
24 հունվարի 2012 թվականի N 13 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 22-ի <<Քաղաքացիական Պաշտպանության պլանների կարգը սահմանելու մասին>> թիվ 633-Ն որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Քաղաքացիական Պաշտպանության պլանը:
2. Տավուշի մարզային փրկարարական վարչության պետին՝ իմ հաստատմանը ներկայացնել Քաղաքացիական Պաշտպանության պլանի կատարումն ապահովող հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝
1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակի հիմնական ցուցանիշներ 01.01.20___թ. դրությամբ
2) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների ցանկ
3) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարածքում հնարավոր իրավիճակի քարտեզ (1:50000 մասշտաբի) և բացատրագիր
4)Տվյալներ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ
5) Տվյալներ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարածքի առավել վտանգավոր ջրամբարների և պոչամբարների վերաբերյալ
6) Սխեմա Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի ազդարարման
7) Ցանկ <<Բարձր>> ԵՎ <<Լրիվ>> պատրաստականության միջոցառումների
8) Քարտեզ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր (1:50000 մասշտաբի)
9) Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկ
10) Բնակչության պատասպարման հաշվարկ
11) Բնակչության մասնակի տարահանման հաշվարկ

12) Ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկ
13) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ցանկ
14) Հրդեհների մասին առաջին ահազանգի ստացման դեպքում արձագանքող ուժերի և միջոցների անվանացանկ
15) Բժշկական ապահովման ուժերի հաշվարկ
16)Տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկ
17) Տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների հաշվարկ
18) Անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների տեղափոխման անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ու դիզելային վառելիքի հաշվարկ
19)Կապի միջոցների հաշվարկ
20) Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների տրանսպորտային ապահովման հաշվարկ
21) Ինժեներական ապահովման տեխնիկայի հաշվարկ
22) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քիմիական հետախուզության և դոզաչափական հսկողության սարքերի հաշվարկ
23) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման սխեմա

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

24 հունվարի 2012թ.
ք. Իջևան